

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՆՈՅԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն	2
1.2. Շինարարություն	4
1.3. Ծառայություններ	5
1.4. Առևտուր	6
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	7
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	9
4. ՓՈԽԱՐԺԵՔ	10
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	11
5.1. Բյուջեի եկամուտները	11
5.2. Բյուջեի ծախսերը	13
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը	14
5.4. Պետական պարտք	14
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	16
6.1. Գնաճ	16
6.2. Ավանդներ	16
6.3. Վարկեր	17
6.4. Դրամական փոխանցումներ	20
7. ԱՄՓՈՓՈՒՄ	20

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ


ՀՀ տնտեսությունը 2023 թվականին աճում է բարձր տեմպերով՝ հիմնականում պայմանավորված 2022թ. տեղի ունեցած աշխարհաքաղաքական իրադարձությունների դրական ազդեցությունների պահպանմամբ: Այդ դրական ազդեցությունների շարքում հարկ է առանձնացնել մարդկանց և կապիտալի ներհոսքը ՀՀ, ինչպես նաև օտարերկրյա ներդրումների և վերարտահանման աճը: Այս գործոնների ազդեցության չափերը վերջին ամիսներին աստիճանաբար նվազում են (քանի որ համեմատվող ժամանակահատվածում դրանք արդեն իսկ առկա էին), ինչի արդյունքում գրանցվում է տնտեսական ակտիվության ցուցանիշի (ՏԱՑ-ի) դանդաղում: Սակայն, նոյեմբերին ի հայտ են եկել նոր զարգացումներ, որոնց արդյունքում ՏԱՑ-ը կտրուկ աճել է: Մասնավորապես, էականորեն աճել է ոսկերչական գործունեությունը (ոսկերչական ապրանքների վերարտահանումը), ինչի արդյունքում 2023թ. նոյեմբերին ՏԱՑ-ն էականորեն արագացել է՝ հասնելով 11.2%-ի՝ նախորդ ամսվա 6.0%-ի համեմատ: Կուտակային՝ հունվար-նոյեմբեր ամիսների ցուցանիշը ևս արագացել է՝ կազմելով 9.4%:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %




2023թ. հունվար-նոյեմբեր ամիսների ՏԱՑ-ի աճը հիմնականում պայմանավորված է եղել առևտրի աճով, որի նպաստումը կազմել է 9.5 տոկոսային կետ: Ծառայությունների աճի տեմպը շարունակել է դանդաղել, ինչի արդյունքում դրա նպաստման չափը շարունակել է փոքրանալ՝ դառնալով 2.6 տոկոսային կետ: Շինարարության ճյուղը նույնպես դրական նպաստում է ունեցել ՏԱՑ-ին՝ 0.8 տոկոսային կետով: Նոյեմբերի զարգացումների արդյունքում արդյունաբերության ոլորտում գրանցվել է աճի դրական դինամիկա, ինչի արդյունքում ընդհանուր ՏԱՑ-ի աճին արդյունաբերության նպաստումը եղել է դրական՝ կազմելով 0.5 տոկոսային կետ:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2023թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերության ոլորտում նոյեմբերին գրանցվել է կտրուկ աճ՝ հիմնականում պայմանավորված ոսկերչական ապրանքների ներմուծման, մշակման և վերարտադրման գործընթացով: Գրանցվել է 23.8% աճ՝ պայմանավորված ոսկերչական արտադրատեսակների արտադրության (ՏԳՏԴ, դաս 32.12) շուրջ 13.7 անգամ աճով: Դրանից կարելի է եզրակացնել, որ տեղի է ունեցել ոսկու ներմուծման, մշակման և արտահանման էական մեծ ծավալների հասնող գործընթաց (քանի որ արտաքին առևտրի վիճակագրությունում դա նույնպես երևում է), ինչը մեծացրել է արդյունաբերության ոլորտի ցուցանիշները: Նմանատիպ գործընթացները վտանգավոր են, քանի որ կախված են արտաքին և

անկանխատեսելի գործոններից, որոնց փոփոխության դեպքում ոլորտում կարող է գրանցվել անկում: Այս զարգացումների արդյունքում հունվար-նոյեմբեր ամիսների աճի տեմպը նույնպես արագացել է՝ հասնելով 2.1%-ի՝ նախորդ ամսվա -0.5% անկման համեմատ:


Հունվար-հոկտեմբեր¹ ամիսների տվյալներով արդյունաբերության անկումը հիմնականում պայմանավորված է եղել հանքարդյունաբերության 4.7% անկմամբ (այն նախորդ ամսվա համեմատ խորացել է 0.2 տոկոսային կետով), որի բացասական նպաստումը կազմել է շուրջ 1.0 տոկոսային կետ: Մշակող արդյունաբերության ոլորտում տնտեսական ակտիվությունը նույնպես բացասական դինամիկա է ունեցել՝ նվազելով 0.2%-ով և ընդհանուր արդյունաբերության անկմանը նպաստելով 0.1 տոկոսային կետով: Մշակող արդյունաբերության ոլորտում խնդրահարույց զարգացումները շարունակվում են: Մասնավորապես, նվազման միտում ունեն նաև սննդի, խմիչքների, հագուստի արտադրությունը և այլ ենթաոլորտներ, որոնք կարևոր են ՀՀ արդյունաբերության և հայկական ծագման արտադրանքի արտահանման երկարաժամկետ կայունության տեսանկյունից:

«Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ոլորտում գրանցվել է 4.5% աճ՝ ընդհանուր արդյունաբերության աճին ունենալով 0.6 տոկոսային կետով դրական նպաստում, իսկ «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ոլորտում՝ 5.9% աճ, որն արդյունաբերության աճին նպաստել է 0.1 տոկոսային կետով:

¹ Արդյունաբերության նոյեմբեր ամսվա տվյալները՝ ըստ ենթաոլորտների, դեռևս չեն հրապարակվել:

1.2. Շինարարություն


Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Շինարարության ոլորտի աճը աստիճանաբար դանդաղում է վերջին ամիսներին: Նոյեմբերին շինարարության աճը կազմել է 11.4%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 2.2 տոկոսային կետով: Մինչև նոյեմբերին ժամանակ, կուտակային՝ հունվար-նոյեմբեր ամիսների աճը նույնպես նվազել է՝ կազմելով 15.6% և նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշի համեմատ դանդաղելով 0.8 տոկոսային կետով: Դանդաղելով հանդերձ, շինարարության աճը դեռևս պահպանվում է բարձր մակարդակում՝ պայմանավորված բնակարանային շինարարությամբ, ինչն էլ իր հերթին բացատրվում է հիպոթեքային վարկերի համար վճարված տոկոսավճարների՝ եկամտային հարկի վերադարձի ծրագրի գործողությամբ: Սակայն վերջին ամիսներին նկատվում է անշարժ գույքի շուկայում գործարքների նվազում, ինչն էլ հանգեցրել է ոլորտի աճի տեմպերի դանդաղմանը:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %




Ծառայությունների ոլորտի աճի տեմպն էականորեն նվազել է և մնում է ցածր մակարդակում: Ծառայությունների ոլորտում նույնաբերին գրանցվել է ընդամենը 2.4% աճ, իսկ հունվար-նոյեմբեր ամիսների աճի տեմպը հասել է 11.1%-ի: Համեմատվող տարում առկա էին ծառայությունների աճը արագացնող էական գործոններ (ՌԴ-ից ՀՀ տեղափոխված մարդիկ), և ծառայությունների աճի դանդաղումը որոշակիորեն պայմանավորված է նաև այդ հանգամանքով: Ընթացիկ տարում, սեպտեմբերից հետո Արցախից բռնի տեղահանված բնակչության տեղափոխումը Հայաստան նույնպես էական ազդեցություն չի ունեցել ծառայությունների աճի տեմպի վրա:

Ծառայությունների ոլորտում, ըստ հունվար-հոկտեմբեր ամիսների տվյալների², աճին մեծամասամբ՝ 7.7 տոկոսային կետով նպաստել է «տեղեկատվություն և կապ» ենթաոլորտի շուրջ 44.1% աճը: Էական նպաստում են ունեցել նաև «տրանսպորտ» և «կացություն և հանրային սնունդ» ենթաոլորտների աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 3.0 և 1.9 տոկոսային կետ: «Ֆինանսական և ապահովագրական գործունեություն» ոլորտում անկումը շարունակվում է խորանալ՝ կազմելով 8.3% (նախորդ ամսվա 7.4 անկման փոխարեն), ինչը 2.5 տոկոսային կետով բացասական նպաստում է ունեցել ծառայությունների աճին:

² Ծառայությունների ոլորտի՝ ըստ ենթաոլորտների, նույնաբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

1.4. Առևտուր


Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



Առևտրի աճի տեմպը, սակայն, կտրուկ արագացել է: Ի տարբերություն տնտեսության մյուս ճյուղերի՝ առևտրի ոլորտում գրանցվել է աճի տեմպի արագացում: Նոյեմբերին առևտրի աճը կազմել է 32.1%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 5.8 տոկոսային կետով: Հունվար-նոյեմբեր ամիսների աճի տեմպը նույնպես արագացել է՝ կազմելով 24.3% և 1.0 տոկոսային կետով բարձր լինելով հունվար-հոկտեմբերի ցուցանիշից: Առևտրի արագացումը մի կողմից կարող է պայմանավորված լինել վերը նշված վերարտադրողական երևույթով, մյուս կողմից՝ Արցախից բռնի տեղահանված բնակչության կողմից ՀՀ-ում իրականացվող սպառման հետևանքով:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճը³, %



Նոյեմբերին արտահանման աճը կտրուկ արագացել է՝ պայմանավորված վերարտահանման նոր ուղղություններով: 2023թ. նոյեմբերին արտահանման աճը կազմել է 85.7%, այն դեպքում, երբ նախորդ հինգ ամիսների միջին աճը կազմում էր 8.9%: Սա պայմանավորված է ոսկու ներմուծման, վերամշակման և արտահանման գործընթացով, որը նաև էականորեն մեծացրել է արդյունաբերության աճը: Հունվար-նոյեմբեր ամիսների արտահանման աճը կազմել է 44.7%՝ հունվար-հոկտեմբերի համեմատ արագանալով 6.0 տոկոսային կետով:

2023թ. հունվար-հոկտեմբեր ամիսների⁴ արտահանման աճը հիմնականում պայմանավորված է եղել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» և «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբերի համապատասխանաբար 1.8, 2.1 և 3.1 անգամ աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր արտահանմանը կազմել են 14.4, 13.6 և 8.2 տոկոսային կետ: Վերջին երկուսի աճի տեմպերն էականորեն նվազել են հունվար-սեպտեմբերի համեմատ՝ արտացոլելով վերարտահանման միտումների փոփոխությունը՝ հատկապես տրանսպորտային միջոցների և սարքավորումների մասով:


Արտահանման աճին բացասական նպաստում են ունեցել «հանքահումքային արտադրանք» ապրանքախմբի, ինչպես նաև «կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք» և «բուսական ծագման արտադրանք»

³ Արտահանման նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են ՀՀ ՎԿ կողմից:

⁴ Արտաքին առևտրի՝ ըստ ապրանքատեսակների, նոյեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

ապրանքախմբերի արտահանման ծավալների համապատասխանաբար 10.9%, 38.0% և 20.8% նվազումները:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճը⁵, %



Ներմուծման աճի տեմպը նույնպես որոշակիորեն արագացել է:

Ներմուծման ծավալների աճը 2023թ. նոյեմբերին կազմել է 25.0%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 0.3 տոկոսային կետով: Հոկտեմբերին ներմուծման ծավալները ևս էականորեն արագացել էին, ինչը հիմնականում պայմանավորված էր «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի աճի տեմպի արագացմամբ: Ստացվում է, որ թանկարժեք մետաղների ներմուծման գործընթացը սկսվել էր հոկտեմբերից, իսկ դրանց վերամշակումը և արտահանումը տեղի է ունեցել նոյեմբերին:

Հունվար-նոյեմբեր ամիսների ներմուծման աճի տեմպը, սակայն, շարունակել է դանդաղել՝ կազմելով 41.0%՝ հունվար-հոկտեմբերի 43.4%-ի դիմաց:

Ներմուծման աճը 2023թ. հունվար-հոկտեմբեր ամիսներին⁶ հիմնականում պայմանավորված է եղել «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ», «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» և «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերի ներմուծման աճերով, որոնք ընդհանուր ներմուծման աճին նպաստել են համապատասխանաբար 14.5, 11.6 և 11.0 տոկոսային կետով: Միևնույն ժամանակ, վերոհիշյալ երկու ապրանքախմբերի՝ «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» և «մեքենաներ, սարքավորումներ և

⁵ Ներմուծման նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են ՀՀ ՎԿ կողմից:


⁶ Արտաքին առևտրի՝ ըստ ապրանքատեսակների, նոյեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

մեխանիզմներ» ապրանքախմբերի ներմուծման ծավալների աճի տեմպերն էապես նվազել են հունվար-սեպտեմբեր ամիսների համեմատ:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ⁷

Անվանական աշխատավարձի աճի տեմպը մնում է բարձր մակարդակում, սակայն նկատվում է փոքր-ինչ դանդաղման միտում: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում 2023 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսներին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ աճել է 16.1%-ով (նախորդ ամսվա համեմատ աճի տեմպը դանդաղել է 0.5 տոկոսային կետով)⁷ կազմելով 263,021.0 դրամ: Ոչ պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 17.1%-ով (նախորդ ամսվա համեմատ աճի տեմպը դանդաղել է 0.8 տոկոսային կետով)⁷ կազմելով 289,296.0 դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձը աճել է զգալիորեն ավելի ցածր՝ 10.4% տեմպով և կազմել 198,613.0 դրամ (պետական հատվածում աշխատավարձի աճի տեմպը նախորդ ամսվա համեմատ արագացել է 0.4 տոկոսային կետով):

Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2022-2023թթ. հունվար-հոկտեմբերին, %



⁷ Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար, նույն բեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (% , աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)



ՀՀ դրամի արժևորման չափը որոշակիորեն փոքրացել է: Հունվար-նոյեմբեր ամիսներին ՀՀ դրամի միջին փոխարժեքի արժևորման չափը ԱՄՆ դոլարի նկատմամբ կազմել է 12.3%, եվրոյի նկատմամբ՝ 9.9%: Վերջիններս ունեն նվազման միտում վերջին ամիսներին, իսկ ամսական տվյալներով և՛ ԱՄՆ դոլարի, և՛ եվրոյի նկատմամբ ՀՀ դրամը հոկտեմբերին և նոյեմբերին միջին հաշվով արժեզրկված է եղել: Հունվար-նոյեմբերին ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի արժևորման տեմպը

շարունակում է էական բարձր մնալ՝ կազմելով 39.6%, սակայն այս դեպքում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին նկատվել է արժևորման տեմպի էական դանդաղում՝ հունիս-սեպտեմբերի միջին ամսական 66.3%-ի փոխարեն նոյեմբերին կազմելով 45.7%: Այնուամենայնիվ, վերջինս ևս էական բարձր ցուցանիշ է, ինչը բացասաբար կարող է անդրադառնալ ՀՀ տնտեսության մրցունակության վրա: Դա արդեն նկատելի է ՀՀ-ից որոշ ապրանքատեսակների արտահանման ծավալների նվազմամբ:


5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

5.1. Բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի եկամուտների աճի տեմպը դանդաղել է: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2023թ. նոյեմբերին աճել են ընդամենը 1.5%-ով (նախորդ ամսվա աճը կազմել էր 15.5%), ինչի արդյունքում հունվար-նոյեմբեր ամիսների աճը ևս դանդաղել է հունվար-հոկտեմբերի համեմատ՝ կազմելով 12.8% (հունվար-հոկտեմբերի աճը՝ 14.0%): Եկամուտների աճի տեմպի դանդաղումը հիմնականում պայմանավորված է ոչ հարկային եկամուտների և պաշտոնական դրամաշնորհների նվազմամբ, սակայն հարկային եկամուտների աճի տեմպը նույնպես էականորեն դանդաղել է:

Այսպես, հարկային եկամուտները նոյեմբերին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել են 5%-ով՝ հոկտեմբերի աճի տեմպի համեմատ դանդաղելով շուրջ 10.1 տոկոսային կետով: Արդյունքում հունվար-նոյեմբեր ամիսների աճի տեմպը ևս դանդաղել է (շուրջ 0.9 տոկոսային կետով)՝ կազմելով 14.1%: Հարկային եկամուտների կուտակային աճի տեմպը, սակայն, դեռևս բարձր է մնում տնտեսական ակտիվության աճի տեմպից, ինչը հուշում է, որ տարվա արդյունքներով կարձանագրվի հարկեր/ՀՆԱ հարաբերակցության որոշակի բարելավում:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը⁸, %



Հարկային եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է հիմնական խոշոր հարկատեսակների՝ շահութահարկի (աճը՝ 43.0%), ԱԱՀ-ի (աճը՝ 13.8%) և եկամտային հարկի (աճը՝ 14.9%) աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր հարկային եկամուտների աճին կազմել են համապատասխանաբար 5.0, 4.8 և 3.7 տոկոսային կետ: Վերջիններիս աճերի տեմպերը, ինչպես նաև նպաստումները նվազել են նախորդ ամսվա համեմատ, ինչով էլ պայմանավորված է ընդհանուր հարկային եկամուտների աճի տեմպի դանդաղումը: Հարկային եկամուտների աճին բացասական նպաստում են շարունակում ունենալ պետական տուրքերի 40.4% և բնապահպանական հարկ և բնօգտագործման վճարի 43.8% նվազումները, որոնք հարկերի աճին հակազդել են համապատասխանաբար 2.4 և 2.1 տոկոսային կետով:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների


	2022թ. հունվար-նոյեմբեր		2023թ. հունվար-նոյեմբեր	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	21.4	21.4	14.1	14.1
Ավելացված արժեքի հարկ	20.6	7.2	13.8	4.8
Ակցիզային հարկ	11.1	0.8	16.2	1.0
Շահութահարկ	44.5	4.4	43.0	5.0
Պետական տուրք	82.5	3.2	-40.4	-2.4

⁸ Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն:

Մաքսատուրք	-33.6	-1.8	34.5	1.0
Բնապահպանական և բնօգտագործման վճարներ	60.3	2.2	-43.8	-2.1
Այլ հարկեր	18.8	0.6	31.2	0.9
Շրջանառության հարկ	26.1	0.6	27.6	0.6
Եկամտային հարկ	9.9	2.7	14.9	3.7
Սոցիալական վճարումներ	48.4	1.3	41.7	1.4

5.2. Բյուջեի ծախսերը


Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ



Պետական բյուջեի ծախսերի աճի տեմպը նույնպես դանդաղել է: Ընդհանուր ծախսերի աճը հունվար-նոյեմբերին կազմել է 11.0%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 3.2 տոկոսային կետով: Ծախսերի աճին 9.1 տոկոսային կետով նպաստել է ընթացիկ ծախսերի աճը: Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների (դրանք հիմնականում կապիտալ ծախսերն են) աճի տեմպը առավել կտրուկ է նվազել՝ հունվար-հոկտեմբերի 32.6%-ից հունվար-նոյեմբերին հասնելով 12.7%-ի (նոյեմբեր ամսվա ընթացքում ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների ծավալը նախորդ տարվա նոյեմբերի նկատմամբ նվազել է շուրջ 29.8%-ով): Կապիտալ ծախսերի (ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր) ծավալը հունվար-նոյեմբերին կազմել է 340.6 մլրդ դրամ, որն ավելի փոքր է նույնիսկ հունվար-սեպտեմբեր ամիսների պլանից՝ 387.9 մլրդ դրամից (իսկ ըստ ճշտված պլանի՝ 414.8 մլրդ դրամից): Տարեկան պլանը կազմում է 558.0 մլրդ դրամ, որը բավական բարձր է՝ հաշվի առնելով փաստացի ցուցանիշները, ինչը նշանակում է, որ տարվա կտրվածքով արձանագրվելու է էական թերակատարում:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), մլրդ դրամ




Պետական բյուջեի պակասուրդը մեծացել է: ՀՀ պետական բյուջեի ծախսերը հունվար-նոյեմբերին գերազանցել են եկամուտները, ինչի արդյունքում ձևավորվել է բյուջեի պակասուրդ շուրջ 62.7 մլրդ դրամի չափով: Սակայն վերջինս ավելի փոքր է, քան նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրված պակասուրդը, որը կազմում էր 86.3 մլրդ դրամ: Այս առումով ևս բյուջեի կատարումն էականորեն շեղվում է պլանից, քանի որ դեռևս հունվար-սեպտեմբեր ամիսներին պակասուրդը պետք է կազմեր 196.2 մլրդ դրամ (իսկ ըստ ճշտված պլանի՝ 248.4 մլրդ դրամ): Ընդ որում, շեղումները հիմնականում պայմանավորված են կապիտալ ծախսերի թերակատարմամբ, ինչն առավել խնդրահարույց է տնտեսական զարգացումների տեսանկյունից:

5.4. Պետական պարտք

Կառավարության պարտքի աճի տեմպը և դանդաղում է: 2023թ. նոյեմբերին ՀՀ պետական պարտքի ԱՄՆ դոլարով արտահայտված ծավալի աճը կազմել է 9.2%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 1.3 տոկոսային կետով: Դրամային արտահայտությամբ ՀՀ պետական պարտքն աճել է 11.2%-ով՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 1.1 տոկոսային կետով: Կառավարության պարտքը նույն միտումներն է ունեցել՝ դոլարային արտահայտությամբ աճելով 10.1%-ով, իսկ դրամային արտահայտությամբ՝ 12.1%-ով: Ներքին պարտքի աճի տեմպն էականորեն ավելի բարձր է եղել. դրամով արտահայտված ներքին պարտքի ծավալն աճել է 21.5%-ով, իսկ դոլարով արտահայտված արտաքին պարտքի ծավալն աճել է 3.5%-ով: Ներքին պարտքի կշիռը ընդհանուր պարտքի պորտֆելում մեծացել է՝ նոյեմբերի վերջի դրությամբ հասնելով 45.3%-ի:

2023թ. նոյեմբերին պետական միջնաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքները որոշակիորեն աճել են, սակայն նախորդ տարվա համեմատ ավելի ցածր են եղել: Պետական կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքը (եկամտաբերությունը) 2023թ. նոյեմբերին կազմել է 10.5%՝ մնալով նախորդ ամսվա մակարդակում, որը, սակայն, նախորդ տարվա նոյեմբերի համեմատ ցածր է 1.1 տոկոսային կետով: Միջնաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը աճել է՝ նախորդ ամսվա համեմատ 0.2 տոկոսային կետով, իսկ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազել է 0.7 տոկոսային կետով: Տոկոսադրույքների վերջին ամիսների աճը կարող է պայմանավորված լինել ինչպես բանկային համակարգում իրացվելիության նվազմամբ (պայմանավորված վարկավորման ծավալների աճով և ավանդների աճի դանդաղմամբ), ինչպես նաև կառավարության կողմից էապես մեծ ծավալներով տեղաբաշխումների իրականացմամբ:


Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ


Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %



2023թ. նոյեմբերին արձանագրվել է գնանկում: Ընթացիկ տարվա հունիսից գնաճը (սպառողական գների աճը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ) գտնվել է բավական ցածր՝ զրոյական կամ փոքր բացասական մակարդակում: Նոյեմբերին գնաճի տեմպը նույնպես բացասական է եղել՝ կազմելով 0.5 տոկոսային կետ, որը հիմնականում պայմանավորված է սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքների գների նվազմամբ, իսկ ծառայությունները դեռևս շարունակում են դրական նպաստում ունենալ գնաճին:


6.2. Ավանդներ

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



Ավանդների աճի տեմպը վերջին երկու ամիսներին նվազել է՝ բազայի էֆեկտի հաշվին: 2023թ. նոյեմբերի վերջի դրությամբ ավանդների ընդհանուր ծավալի աճի տեմպը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ կազմել է 13.5%: Հոկտեմբերի համեմատ ավանդների ծավալը աճել է շուրջ 1.5%-ով: Ավանդների ծավալի աճը պայմանավորված է հիմնականում ռեզիդենտների ավանդների աճով, որը կազմել է 19.0%, իսկ ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների ծավալը նախորդ տարվա նոյեմբերի նկատմամբ նվազել է 0.7%-ով: Վերջինս, սակայն, նույնպես պայմանավորված է բազայի էֆեկտով (նախորդ տարվա հոկտեմբերին ոչ ռեզիդենտների ավանդների ծավալները կտրուկ աճել էին, այնուհետև որոշակիորեն նվազել էին ընթացիկ տարվա մարտին), քանի որ հոկտեմբերի համեմատ ոչ ռեզիդենտների ավանդների ծավալն աճել է 4.2%-ով:

Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




Ավանդների աճին առավելապես նպաստել է տնային տնտեսություններից ներգրավված ավանդների աճը՝ շուրջ 9.1 տոկոսային կետով: Ռեզիդենտների ավանդների շարքում էական նպաստում է ունեցել նաև ձեռնարկություններից ներգրավված ավանդների աճը, որի նպաստումը կազմել է շուրջ 3.9 տոկոսային կետ:

6.3. Վարկեր


Վարկերի ծավալների աճի տեմպը կայունացել է բարձր մակարդակում: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) ծավալը 2023թ. նոյեմբերին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 21.7%-ով՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 0.2 տոկոսային կետով:

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճերը՝ ըստ վարկառուների ռեզիդենտության, %



Վարկերի աճը տեղի է ունեցել ինչպես ռեզիդենտներին, այնպես էլ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճի հաշվին, որոնց աճերը կազմել են համապատասխանաբար 21.8% և 20.5%, իսկ նպաստումները՝ 20.6 և 1.1 տոկոսային կետ:


Գծապատկեր 19. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների աճը պայմանավորված է ինչպես տնային տնտեսություններին, այնպես էլ իրավաբանական անձանց տրամադրված վարկերի աճով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 10.0 և 11.8 տոկոսային կետ: Ընդ որում, հատկանշական է, որ իրավաբանական անձանց տրամադրվող վարկերի ծավալների աճի տեմպը տարեսկզբին բացասական էր, սակայն վերջին ամիսներին մտել է դրական տիրույթ, էականորեն արագացել է և նույնաբերին գերազանցել է տնային տնտեսություններին տրամադրվող վարկերի աճին՝ հասնելով 23.8%-ի: Ընդ որում,

ընդհանուր վարկերի աճի կայունացումը և փոքր դանդաղումը տեղի է ունեցել տնային տնտեսություններին տրամադրվող վարկերի աճի տեմպի դանդաղման արդյունքում:

Գծապատկեր 20. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ




Ռեզիդենտների⁹ շարքում բոլոր ուղղություններով առկա է դրական դինամիկա, բացի արդյունաբերության ոլորտից: Վարկերի աճին շարունակում են էական մեծ նպաստում ունենալ հիպոթեքային վարկերը, որոնց աճը կազմել է 26.7%, իսկ նպաստման չափը՝ 5.5 տոկոսային կետ: Վերջինիս աճի տեմպը, սակայն, շուրջ 1.5 տոկոսային կետով դանդաղել է նախորդ ամսվա համեմատ: Էապես աճել են նաև ծառայությունների ոլորտին տրամադրվող և սպառողական վարկերը, որոնց աճերը հոկտեմբերին կազմել են 31.0% և 21.3%, իսկ նպաստումները ընդհանուր վարկերի աճին՝ 5.0 և 4.7 տոկոսային կետ: Վարկերի աճին նշանակալի նպաստում ունեն շինարարության և գյուղատնտեսության ոլորտի վարկերը, որոնց աճերը կազմել են 42.0% և 25.6%, իսկ նպաստումները՝ 3.5 և 1.4 տոկոսային կետ: Արդյունաբերության ոլորտի կազմակերպություններին տրամադրվող վարկերը դեռևս բացասական դինամիկա ունեն, ինչը պայմանավորված է և՛ հանքարդյունաբերության, և՛ մշակող արդյունաբերության ոլորտներում վարկերի նվազմամբ:

⁹ Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում:

6.4. Դրամական փոխանցումներ

Գծապատկեր 21. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումների զուտ ներհոսքը, մլն ԱՄՆ դոլար¹⁰



Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքը նախորդ տարվա համեմատ շարունակում է մնալ ցածր մակարդակում: 2023թ. հոկտեմբերին բանկային համակարգի միջոցով դեպի Հայաստան փոխանցված գումարների զուտ ներհոսքը (ներհոսքի և արտահոսքի տարբերությունը) կազմել է 125 մլն ԱՄՆ դոլար, որը թեև բարձր է նախորդ ամսվա ցուցանիշից, սակայն շարունակում է էականորեն զիջել հունվար-սեպտեմբեր ամիսների միջին ցուցանիշին: Հունվար-հոկտեմբեր ամիսներին դեպի ՀՀ փոխանցված գումարների զուտ ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 29.2%-ով: Ընդ որում, նվազումը հիմնականում պայմանավորված է արտահոսքի 65.7% աճով, մինչդեռ ներհոսքի աճը կազմել է 17.8%:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. Տնտեսական ակտիվության աճի տեմպը վերջին ամիսներին բավական տատանողական է դարձել, և հաճախ պայմանավորված է լինում միանգամյա և կարճաժամկետ գործոններով: Հաշվի առնելով նախորդ տարվա բարձր աճ ապահովող գործոնների աստիճանաբար ավելի փոքր նպաստումը ՏԱՑ-ին՝ վերջինիս աճի տեմպը դանդաղում է աստիճանաբար: Սակայն նոյեմբերին տեղի են ունեցել նոր զարգացումներ, ինչի արդյունքում ՏԱՑ-ը կտրուկ աճել է՝ նախորդ ամսվա 6.0 տոկոսից հասնելով 11.2%-ի: Նոր զարգացումները վերաբերում են

¹⁰ Ներկայացված են ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը ամսական փոխանցումները և դրանց տարբերությունը՝ ԱՄՆ դոլարով: Նոյեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

ոսկերչական արտադրատեսակների արտադրության գործունեության տեսակով արձանագրված շուրջ 13.7 անգամ աճին:

2. Չնայած արդյունաբերության աճի տեմպի կտրուկ արագացմանը՝ ոլորտի զարգացումները շարունակում են մտահոգիչ մնալ: Պատճառը հիմնականում կայանում է նրանում, որ բարձր աճն ապահովվել է ոսկերչական արտադրատեսակների արտադրության գործունեության տեսակով արձանագրված շուրջ 13.7 անգամ աճի հաշվին, մինչդեռ ՀՀ արդյունաբերության համար կարևոր այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են սննդի, խմիչքների, հագուստի արտադրությունը, շարունակում են անկում ունենալ: Այս ուղղությամբ հաճախ խոսվում է փոխարժեքի արժևորման մասին՝ որպես ենթաոլորտների անկման հնարավոր պատճառ: Սակայն վերջինիս զուգահեռ, անհրաժեշտ է նաև ոլորտի պետական աջակցության ծրագրերի իրականացումը, այդ թվում՝ լոգիստիկ խնդիրների լուծումը, ինչը հնարավորություն կտա առնվազն դանդաղեցնել անկման տեմպերը:

3. Պետական բյուջեի կապիտալ ծախսերն այս տարի ևս կթերակատարվեն: Հունվար-նոյեմբեր ամիսների արդյունքներով իրականացվել է ընդամենը 340.6 մլրդ դրամի չափով կապիտալ ծախսեր (ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր), որն ավելի փոքր է նույնիսկ հունվար-սեպտեմբեր ամիսների պլանից՝ 387.9 մլրդ դրամից (իսկ ըստ ճշտված պլանի՝ 414.8 մլրդ դրամից): Տարեկան պլանը կազմում է 558.0 մլրդ դրամ, որը բավական բարձր է՝ հաշվի առնելով փաստացի ցուցանիշները, ինչը նշանակում է, որ տարվա կտրվածքով արձանագրվելու է էական թերակատարում:

4. Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող գումարների զուտ ներհոսքը նախորդ տարվա համեմատ շարունակում է մնալ ցածր մակարդակում՝ հիմնականում արտահոսքի աճի հետևանքով: 2023թ. հոկտեմբերին բանկային համակարգի միջոցով դեպի Հայաստան փոխանցված գումարների զուտ ներհոսքը (ներհոսքի և արտահոսքի տարբերությունը) կազմել է 125 մլն ԱՄՆ դոլար՝ էապես ցածր լինելով տարեսկզբի և նախորդ տարվա վերջին ամիսների ցուցանիշներից: Հունվար-հոկտեմբեր ամիսներին դեպի ՀՀ փոխանցված գումարների զուտ ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նույնպես բավական ցածր է, ինչը հիմնականում պայմանավորված է ՀՀ-ից արտարժույթային միջոցների արտահոսքի աճով:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: